

Թեան տակ երկար տեւած է այս վիճակը, եւ Բոխ գեղեցիկ կը նկարագրէ տակաւին իւր ուղեւորութեան ասին շարունակուող այս զրութիւնը, որոնց տեարք իրական «ձորապետ», էին (Բոխ այսպէս „Thalherr“ կը թարգմանէ թուրքական ծանօթ «Տէրէպէյի», ն), եւ կ'որոշէ բաղմնութիւ այսպիսեաց իշխանութեան հողերու սահմանները, որոնց մէջ փոքրիկներէն էր յիշեալ Արտաշէնի հողը (Բոխ, էջ 124.) իսկ մեծագոյններէն Համշէն, որուն մեծ իշխանն ուրոյն „Woywode“ յորջորջանքը կը կրէր, իւր ձեռքին տակ ունենալով մասնական հովիտներու տէր փոքր իշխաններ: Բոխ կը ջանայ գծել իւր Ժամանակի Համշէնի աւատական գաւառին („Lehngau“) սահմանները՝ հանդէպ Բիզէի եւ Հազաստանի գաւառներուն (էջ 23—25): Բոխ հիւր եղած էր ի Ճեմիլ (Կ. Djemil, Բոխ Djimil) — որ Բիզէէ Սպեր ճամբուն վրայ՝ հանգրուան գիւղ մըն է, — Համշէնի իշխանաց միոյն, որ բնականապէս շատո՛ց մահմետականացած տնէ էր: Սակայն անոր տիպարն այնպէս բնորոշ հայկական կը դտներ, որ «Թերեւս գլխաւորաբար հայ արիւնը կը հոսէր իւր երակաց մէջ. Թերեւս հայ ընտանիքէ մըն էր, որ իւր գլխաւորին՝